Կառնուտ

Կառնուտ բնակավայր վարչական տարածքը կազմում է 1936,24 հա, բնակչությունը 1015 մարդ: Կառնուտ բնակավայրը մարզկենտրոնից գտնվում է 10 կմ հեռավորության վրա: Գյուղը տեղադրված է Փամբակի լեռնաշղթայի ստորոտում՝ քարքարոտ ձորում՝ ծովի մակարդակից 1570մ բարձրության վրա: Ունի ցուրտ կլիմա, սակավ տեղումներ: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Գյուղի հյուսիս-արևելքում պահպանվում է կիսավեր եկեղեցին, որը ենթադրվում է, որ հնագույն շրջանում եղել է հեթանոսական մեհյան, իսկ 4-5-րդ դարերում վերածվել է եկեղեցու: Ունի դպրոց, բուժկետ, կառուցվում է մանկապարտեզի շենք: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը հողագործությունն է: Մշակում են հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաներ, պտուղներ: Կառուցված է Կառնուտի ջրամբարը: